

զայրանալով՝ ի բարկութիւն մեծ բորբոքեր Դանունն, եւ ասեր. Արդ ուրեմն վերստին կամի Զամագասպեան զսա իւր փեսայ առնել, եւ զԶամագասպուհի գքոյր իւր տալ սմա կնութեան. վասն այսորիկ անխայեաց ի դա, պահել հրամայէր: 53 Եւ անդէն ոտն ածեալ էջ ի ձիոյն, եհան զթուրն, մատուցեալ ի նա՝ պատառ պատառ կոտորեալ, անդէն ցրեալ սատակեաց զնա:

54 Իսկ այլ զաւրթն ամենայն դեռ զային ի կոտորածոյն, զբազումս ձերբակալ արարեալ եւ կալեալ ածելին: 55 Եւ զԲատն, արքային Վարազդատայ զքսուն, զսպանաւղն Մուշեղի, կալեալ իւր որդուովն առաջի սպարապետին Մանուէլի, եւ զայլս՝ որք միանգամայն գործոց սատարն լեալ էին՝ ըմբռնէին զամենեսեան, առ նա ածելին: 56 Եւ մեծաւ դատաստանաւք դատեցաւ զանաւրէնն Բատ սպարապետն Մանուէլ: 57 Բայց նախ յանդիման նմա հրամայէր փողոտել զորդին Նորա, ապա յետոյ զնա գլխատել. եւ զայլսն կոտորեաց ըստ նմին արինակի: 58 Եւ զթագաւորն Վարազդատ հալածեցին ի յերկրէն ի սահմանացն Զայոց. չոգաւ զնաց ի յերկիրն Յունաց. անդ եկաց որչափ եւ եկեաց, եւ անդէն մեռաւ:

59 Եւ սպարապետն զաւրավարն Զայոց Մանուէլ Նուաճեաց զաշխարհս, եւ զամենայն մեծամեծս եւ զնախարարսն Զայոց առ ինքն ժողովէր, եւ էր նա առաջնորդ եւ զլուխ Նոցա. եւ վարէր զիւր իշխանութիւնն, եւ տայր հրաման աշխարհի փոխանակ թագաւորի. եւ ունէր զաշխարհ ի շինութեան: 60 Եւ զկինն Պապայ արքայի զՉարմանդուխտ տիկին, հանդերձ որդուովք Արշակունովք, առեալ զնոսա՝ ի տեղի թագաւորի կալեալ ի պատիւ շրջեցուցանէր: 61 Մեծաւ իմաստութեամբ եւ բազում յաջողութեամբ աշխարհին Զայոց մեծապէս առաջնորդէր, որչափ եկաց ժամանակս: 62 Բայց անուանք պատանեկացն Արշակունեացն, անուն երիցուն՝ Արշակ, եւ կրտսերուն՝ Վաղարշակ, զնոսա առեալ Մանուէլն սպարապետն՝ իբրեւ զսան սնուցանէր, եւ զմայրն Նոցա զՉարմանդուխտ ի մեծի շքի տիկնութեան պատուէր: 63 Բայց յորժամ տեսանէր Մանուէլն՝ զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց թագաւորին Յունաց, ածեալ զմտաւ իւրով՝ թէ արժան է նմա զէթ զմի ոք թիկունս առնել նմա, ապա խորհեցան խորհուրդ ընդ տիկնոջն, եւ կամեցաւ թիկունս առնել զարքայն Պարսից¹:

1 Յոր. Յունաց